**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Հասցե՝ ք.Գավառ, Նալբանդյան 116, Հեռ.՝ 060-71-25-30, 2-38-01

Թիվ 95/8/77-26

12 մայիսի, 2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետին փոխարինող,
Պարոն Ջանիկ Բազեյան

Հարգելի՛ պարոն Բազեյան,

Հայտնում եմ, որ ս/թ մայիսի 15-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանևան բնակավայրում նախատեսվում է անցկացնել «Տարածաշրջանին բնորոշ արտակարգ իրավիճակները, կանխարգելումը և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերը» թեմայով զրույց-քննարկում, ինչպես նաև «ազդարարում, տարահանում և պատսպարում» թեմայով գործնական վարժանք:

Հայտնելով վերոգրյալը խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցության, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կայքում հայտարարություն տեղադրելու համար:

Կից ներկայացնում եմ միջոցառման օրակարգը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ

փ/ծ գնդապետ՝ Գ. Հակոբյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
աշխատակազմի ԱԿՓ և
ՀՀ կապերի վարչության
Փաստաթղթաշրջանառության
բաժին
«13» 05 2026
Մտից թիվ 4-856

Օրակարգ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վանևան բնակավայրում ''Տարածաշրջանին բնորոշ արտակարգ իրավիճակները, կանխաարգելումը և Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերը''' թեմայով 2026թ. Մայիսի 15-ին անցկացվելիք զրույց-քննարկման և գործնական վարժանքի

Անցկացման ժամը	**միջոցառումը**	**անցկացնող**
12:00-12:30	Մասնակիցների մեկնում Գ. Վանևան /մ/դ/	
12:30-12:35	Բացման խոսք	Վ. Հարությունյան Գ. Հակոբյան
12:35-12:45	Մասնակիցների ներկայացում	Մասնակիցներ
12:45-13:45	Սեմինար պարապմունք և զեկույց-քննքրկում <<ազդարարում, տարահանում, պատսպարում և բնակավայրի խոցելիությունը ՔՊ տեսանկյունից>>, <<Բնակավայրին բնորոշ արտակարգ իրավիճակները և դրանց կանխարգելումը>> թեմաներով: - բնակչության ազդարարում - բնակչության պատսպարում - բնակչության տարահանում - բնակչության ԱՊՄ ապահովում - ՔՊ ծառայություններ - ՔՊ կազմավորումներ - Ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների ներգրավումը փրկարարական և այլ վթարավերականգնողական աշխատանքներն	Գ. Հակոբյան մասնակիցներ
2026թ Մայիս	Տնային աշխատանք՝ <<Ներկայացնել առաջարկություններ բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհների կանխարգելումը>> թեմայով	մասնակիցներ
13:20-13:30	Գործնական վարժանք <<Օգնությունը և փոխօգնությունը հրդեհի ժամանակ>> թեմայով	Գ. Հակոբյան մասնակիցներ
13:45-14:00	Գործնական վարժանք <<ազդարարում և պատսպարում>> թեմայով	Մասնակիցներ
14:00-14:10	Ամփոփում վարժանքի անցկացման	Մասնակիցներ